# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշեն համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեղրաշեն, (098)061053, mexrashen2011@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 6

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի , Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատվաշ կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 6-ի թիվ 10 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.037016 հեկտար գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը / կադաստրային ծածկագիր՝ 08-083-0228-0011/ փոխադրել էներգետիկայի, կապի տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության, այդ հողամասում առկա օրվա կարգավորման ջրամբարի գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշենի գյուղական համայնքի ղեկավար Հունան Պետրոսյանին՝

1/ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2/ հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն: